ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 06-Լ

«11» 02 2026թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 47 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության բնականոն գործունեությունն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության դատախազի 1 թափուր հաստիքը Արագածոտնի մարզի դատախազության դատախազի 1 հաստիքով փոխարինելու, Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության դատախազի և Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազության դատախազի մեկական թափուր հաստիքները Լոռու մարզի դատախազության դատախազի 2 հաստիքով փոխարինելու, ինչպես նաև Գեղարքունիքի մարզի դատախազության ավագ դատախազի 2 թափուր հաստիքը նույն դատախազության դատախազի 2 հաստիքով փոխարինելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2022 թվականի հունիսի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2021 թվականի նոյեմբերի 22-ի N 91

հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 47 հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1-ին հավելվածի 1-ին բաժնի 2-րդ գլխի 4-րդ կետի «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության դատախազ 1» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության դատախազ 0» բառերով, իսկ «Ընդամենը 2» բառերը՝ «Ընդամենը 1» բառերով,

2) 1-ին հավելվածի 2-րդ բաժնի 15-րդ գլխի «Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 138» բառերը փոխարինել «Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 137» բառերով,

3) 1-ին հավելվածի 3-րդ բաժնի 18-րդ գլխի 67-րդ կետի «Դատախազության ավագ դատախազ 3» բառերը փոխարինել «Դատախազության ավագ դատախազ 2» բառերով, իսկ 68-րդ կետի «Դատախազության դատախազ 5» բառերը՝ «Դատախազության դատախազ 6» բառերով,

4) 1-ին հավելվածի 3-րդ բաժնի 20-րդ գլխի 76-րդ կետի «Դատախազության դատախազ 5» բառերը փոխարինել «Դատախազության դատախազ 4» բառերով, իսկ «Ընդամենը 11» բառերը՝ «Ընդամենը 10» բառերով,

5) 1-ին հավելվածի 3-րդ բաժնի 23-րդ գլխի 88-րդ կետի «Դատախազության դատախազ 5» բառերը փոխարինել «Դատախազության դատախազ 4» բառերով, «Ընդամենը 11» բառերը՝ «Ընդամենը 10» բառերով, իսկ Ընդամենը՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում 107» բառերը՝ «Ընդամենը՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում 105» բառերով,

6) 1-ին հավելվածի 4-րդ բաժնի 27-րդ գլխի 103-րդ կետի «Դատախազության ավագ դատախազ 5» բառերը փոխարինել «Դատախազության ավագ դատախազ 3» բառերով, իսկ 104-րդ կետի «Դատախազության դատախազ 4» բառերը՝ «Դատախազության դատախազ 6» բառերով,

7) 1-ին հավելվածի 4-րդ բաժնի 28-րդ գլխի 108-րդ կետի «Դատախազության դատախազ 8» բառերը փոխարինել «Դատախազության դատախազ 10» բառերով, իսկ «Ընդամենը 15» բառերը՝ «Ընդամենը 17» բառերով,

8) 1-ին հավելվածի 4-րդ բաժնի 33-րդ գլխի «Ընդամենը՝ Մարզերի դատախազություններում 117» բառերը փոխարինել «Ընդամենը՝ Մարզերի դատախազություններում 120» բառերով,

9) 1-ին հավելվածի 6-րդ բաժնի «Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում դատախազների թիվը 138» բառերը փոխարինել «Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում դատախազների թիվը 137» բառերով, «Ընդամենը՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում դատախազների թիվը 107» բառերը՝ «Ընդամենը՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում դատախազների թիվը 105» բառերով, իսկ «Ընդամենը՝ Մարզերի դատախազություններում դատախազների թիվը 117» բառերը փոխարինել «Ընդամենը՝ Մարզերի դատախազություններում դատախազների թիվը 120» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին և տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ **Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**